ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏ

ПАЛАТА АРХИТЕКТОРОВ АРМЕНИИ — CHAMBER OF ARCHITECTS OF ARMENIA

ՀՀ, Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պող. 17
РА, Ереван 0019, пр Маршала Баграмяна 17
RA, Yerevan 0019, av. Baghramyan 17

N: ՃՊ 01/01 "17" 03 2022 թ.
Tel. +374 10 561506, +374 10 583242
e-mail: armarchunion@mail.ru

Գյումրի համայնքի ղեկավար
պարոն Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ

# ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

ՀՀ վաստակավոր ճարտարապետ, 1962 թվականից ՀՀ ճարտարապետների միության անդամ Սաշուր Հրայրի Քալաշյանը նշանակալի ներդրում ունի Հայաստանի քաղաքաշինական-ճարտարապետական գործընթացներում: Ս. Քալաշյանը իր մասնագիտական բարձր գիտելիքներով և կազմակերպչական հմուտ կարողություններով ու սկզբունքայնությամբ մեծ հարգանք ու վստահություն է վայելում պետական մարմինների և ճարտարապետական հանրության կողմից: Նրա նախագծերով կառուցվել են բազմաթիվ բնակելի, հասարակական և ուսումնական շենքեր ու համալիրներ:

1976-1994 թթ. Սաշուր Քալաշյանը աշխատել է Գյումրու գլխավոր ճարտարապետ՝ մեծ ավանդ ունենալով Գյումրի քաղաքի կառուցապատման, «Կումայրի» արգելոց-թանգարանի կազմակերպման և այն կյանքի կոչելուն, որի համար ստացել է ՀՀ պետական մրցանակ: մեծ է նրա կատարած աշխատանքը 1988 թվականի Սպիտակի երկրաշարժի հետևանքները Գյումրի քաղաքում վերացնելու գործում: Նրա անմիջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ վերականգնվել են «Կումայրի» արգելոց-թանգարանի տարածքում գտնվող բազմաթիվ ճարտարապետական ու մշակութային արժեք ներկայացնող հուշարձաններ, ինչպիսիք են՝ Ս.Մերկուրովի տուն-թանգարանը, Ձիթողցիների տունը, նկարչուհիներ՝ Ասլամազյան քույրերի թանգարանը, Ծաղիկյանների գարեջրի գործարանը և այլն: Նախագծվել և կյանքի է կոչվել Գյումրու Աբովյան և Կիրովի հետիոտն փողոցների բարեկարգման աշխատանքները:

Ճարտարապետներ Ա. Թարխանյանի և Ս. Քալաշյանի կողմից Երևանի Ծիծեռնակաբերդի տարածքում նախագծված ու 1915 թ. զոհերի հիշատակին կառուցված Եղեռնի հուշարձանը արժանացել է համաժողովրդական ճանաչման: Հուշահամալիրի տարածքում Ս. Քալաշյանի և Լ.Մկրտչյանի նախագծով կառուցվել է Եղեռնի թանգարանը, որն ամբողջացրեց ամբողջ համալիրը:

Ճարտարապետ Ս.Քալաշյանը այժմ էլ մեծ նվիրվածությամբ աշխատում է «Հայնախագիծ» ԲԲԸ-ում՝ որպես գլխավոր ճարտարապետ՝ իր հարուստ փորձն ու գիտելիքները հաղորդելով երիտասարդ ճարտարապետներին:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ խնդրում եմ քննարկման դնելու Սաշուր Հրայրի Քալաշյանին Գյումրի քաղաքի «Պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու հարցը:

Հարգանքով՝

ՀՀ ճարտարապետների պալատի նախագահ,
ՀՀ վաստակավոր ճարտարապետ Ս.ՄԻՆԱՍՅԱՆ